# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԸԱՇՁԲ-13/11 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2013 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված N ԲԸԱՇՁԲ-13/11 պայմանագրում 2018 թվականի հունիսի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | Կապալառու կազմակերպության գրություն: |
| Փոփոխության նկարագրություն | Պայմանագրի 16.02.2018թ. կնքված N 12 համաձայնագրով նախատեսված կանխավճարի մարումն իրականացնելու ձևի սահմանում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.4 կետ: |

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 13

## 13.09.2013թ. կնքված N ԲԸԱՇՁԲ-13/11 գնման պայմանագրի

ք. Երևան 27.06.2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԲԱԶԱԼՏ-ԷՄ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 13.09.2013թ. կնքված N ԲԸԱՇՁԲ-13/11 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 16.02.2018թ. կնքված N12 համաձայնագրի 1.2 կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

<<Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է 2018 թվականի համար նախատեսված գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:>>:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012714
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**

<<ԲԱԶԱԼՏ-ԷՄ >> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Արցախի 8,
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 11500632126500
ՀՎՀՀ 09811321

Տնօրեն՝

_____ Գ. Հովակիմյան
(ստորագրություն)

Կ.Տ.